

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ

2009 թվականի հունվար-հունիս ամիսների փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տարվա առաջին եռամսյակում արձանագրված մակրոտնտեսական կատարողականի վատթարացումը, որը պայմանավորված էր համաշխարհային ճգնաժամի՝ Հայաստանի տնտեսության վրա թողած բացասական ազդեցությամբ, ոչ միայն չի մեղմվել, այլև ավելի է խորացել: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է տնտեսական անկում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության անկում, հանրապետությունում աճել է գործազրկության պաշտոնական մակարդակը:

Տնտեսության անբարենպաստ զարգացումների արդյունքում 2009 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների անկում, ընդ որում՝ անկում է գրանցվել գրեթե բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքագրման գծով: Այնուհանդերձ առաջին կիսամյակում հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է խիստ ընդլայնող՝ նպատակ ունենալով պահանջարկի ընդլայնման միջոցով հակազդել տնտեսության ակտիվության անկմանը:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ¹

2009 թվականի առաջին կիսամյակում վերջնական սպառումն իրական արտահայտությամբ, ըստ գնահատականների, նվազել է 5.5%-ով: Վերջնական սպառման իրական տոկոսային փոփոխության՝ պետական բյուջեի հիմքում դրվածի համեմատ ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվանից սկսված տնտեսական ճգնաժամի հետեւանքով բնակչության իրական եկամուտների աճի տեմպերի զգալի նվազմամբ և դրա շարունակական խորացմամբ 2009թ. առաջին կիսամյակում: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2009 թվականի հունվար-հունիսին կազմել են 12.5 և

¹ ՀՀ ֆինանսների նախարարության 2009 թվականի առաջին կիսամյակի նախնական գնահատականներ:

87.5 տոկոս, ընդ որում մասնավոր սպառումը նախորդ տարվա համեմատ իրական արտահայտությամբ աճել է 1.5%-ով, իսկ պետական սպառումը՝ նվազել է 15.5%-ով:

Կապիտալ ներդրումները կրճատվել են 20.4%-ով, հիմնականում մասնավոր ներդրումների 25.9% իրական անկման պատճառով, որը հիմնականում պայմանավորված է շինարարության ճյուղի աճի տեմպերի զգալի նվազմամբ, որն իր հերթին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված կապիտալ և ընթացիկ տրանսֆերտների սպասվածից էական նվազման արդյունք է: Կապիտալ ներդրումներում պետական ներդրումների տեսակարար կշիռն աճել է 7.6 տոկոսային կետով:

2009 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում գնահատվում է ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների 13.4% նվազում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի անկման և հոկտեմբեր ամսից համաշխարհային շուկաներում արձանագրված հունքային ապրանքների գների կտրուկ անկմամբ: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է շուրջ 19%-ով:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ


2009 թվականի հունվար-հունիս ամիսներին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 1119.4 մլրդ դրամ, ընդ որում իրական ՀՆԱ-ն նվազել է 16.3%-ով, իսկ դեֆլյատորը կազմել է 2.1%: Իրական աճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 26.5 տոկոսային կետով, իսկ դեֆլյատորը՝ 5.9 տոկոսային կետով:

2009 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում ծառայությունների ոլորտը եղել է տնտեսական աճին դրական նպաստում ունեցող միակ ոլորտը²: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 0.7 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 1.9%: Տնտեսության մյուս բոլոր ճյուղերը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված նվազել են. շինարարությունը 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ նվազել է 51.9%-ով, որի պատճառով տնտեսական աճն ընկել է 11.9 տոկոսային կետով, արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) նվազել է 11.2%-ով և 16.3% տնտեսական անկմանը նպաստել

² Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին

1.9 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունը նվազել է 2.4%-ով և անկմանը նպաստել 0.2 տոկոսային կետով: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:

Գծապատկեր 1. 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափերը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2004-2008 թվականների և 2009 թվականի առաջին կիսամյակի իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ

	2004	2005	2006	2007	2008	2009 I կիսամյակ
Համախառն ներքին արդյունք	110.5	113.9	113.2	113.8	106.8	83.7
Գյուղատնտեսություն	114.2	111.2	100.5	110.2	101.3	97.6
Արդյունաբերություն	102.2	105.6	97.5	103.1	102.4	88.8
Շինարարություն	115.3	127.9	137.7	118.6	107.2	48.1
Ծառայություններ	112.7	115.0	116.0	113.4	108.5	101.9
Ջուտ անուղղակի հարկեր	102.4	112.4	114.9	132.1	116.8	77.7

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 11.5% նվազում՝ 2008 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրված 0.2% նվազման դիմաց³: Արդյունաբերական արտադրանքի նվազումը պայմանավորված է հանքագործական

³ Այսուհետ՝ ցուցանիշները ներկայացված են տնտեսության ճյուղերում ստեղծված համախառն արտադրանքի ծավալներով


արդյունաբերության, մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության և բաշխման ծավալների համապատասխանաբար 9.3, 12.6 և 8.9 տոկոս անկումներով: Չնայած մշակող արդյունաբերության ոլորտում արձանագրվել է անկում, սակայն նրա առանձին ենթաճյուղերում գրանցվել է թողարկման ծավալների աճ, մասնավորապես՝ ռետինե և պլաստմասայե արտադրատեսակների արտադրություն (31.0%) մետաղագործական արդյունաբերության (10.1%), ծխախոտային արտադրատեսակների արտադրության (30.4%) և հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեության, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացման ճյուղերում (1.6%):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության և անտառային տնտեսության համախառն արտադրանքի ծավալի 2.5% նվազում: Ընդ որում, գյուղատնտեսության անկումը պայմանավորված է անասնաբուծության համախառն արտադրանքի 2.8% և բուսաբուծության 1.9% և անտառային տնտեսությունն 11.5%-ով նվազումներով:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները 2009 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում կազմել են շուրջ 124.6 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 53.5%-ով: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 40.8% և նվազել են 69.4%-ով, իսկ կազմակերպությունների միջոցները կազմել են 44.9% և դրանց հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են նախորդ տարվա նկատմամբ նվազել են 19.8%-ով: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները կազմել են մոտ 9.7 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 55.1%-ով:

Շինարարության հիմնական միջոցները ըստ տնտեսության ճյուղերի շարունակում են ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, որին բաժին է ընկել կատարված շինարարության ծավալների 39.6%-ը: Հաջորդ մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերն են տրանսպորտը և կապը, արդյունաբերությունը, ինչպես նաև առևտուրը (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ: 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2008 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.9%-ով: Մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում կապի (22.7%), տրանսպորտի (20.2%) և ֆինանսական գործունեության (20.1%) ծառայությունները, ինչպես նաև առողջապահության (6.3%), կրթության (5.9%) և հյուրանոցային, ռեստորանային (4.0%) ծառայությունները:

2009 թվականի հունվար-հունիս ամսներին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 624.6 մլրդ դրամ, որը 2008 թվականի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, նվազել է 4.9%-ով, որտեղ մանրածախ առևտուրը մնացել է անփոփոխ, իսկ մեծածախ առևտուրը և ավտոմեքենաների առևտուրը՝ նվազել համապատասխանաբար 4.8 և 4.9 տոկոսով:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ: 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2008 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 12.4%-ով: Բեռնափոխադրումների ծավալն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի բոլոր տեսակների նվազել է (երկաթուղային՝ 11.8, ավտոմոբիլային՝ 11.3, օդային՝ 23.9 և մայրուղային-խողովակաշարային՝ 16.5 տոկոսներով):

2009 թվականի հունվար-հունիսին կապի ծառայություններից ստացված հասույթը համադրելի գներով 2008 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 4.7%-ով: Կապի ոլորտում աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ շարժական կապի աճի՝ կազմելով 2.2%, իսկ ֆիքսված հեռախոսային կապը նախորդ տարվա նկատմամբ համադրելի գներով նվազել է 11.5%-ի չափով:

ՂՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ: 2009 թվականի հունիսին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 5.2% գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել

պարենային ապրանքների գների՝ 3% (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների՝ 9% (նպաստումը գնաճին՝ 1.4 տոկոսային կետ) աճով և ծառայությունների սակագների 7.3% (նպաստումը գնաճին՝ 2.2 տոկոսային կետ) աճով:

2009 թվականի հունիսին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.3% գնանկում, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 3.6%:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ: 2009 թվականի հունվար-հունիսին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.4 տոկոսային կետով և կազմել 6.7% (79.1 հազ. մարդ), որը պայմանավորված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով համախառն պահանջարկի, ինչպես նաև աշխատուժի նկատմամբ պահանջարկի զգալի նվազմամբ:

2009 թվականի երկրորդ եռամսյակում միջին ամսական անվանական աշխատավարձը 2008 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 12.7%-ով, ընդ որում՝ բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 17.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 81282 դրամ և 122579 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 98138 դրամ:

2009 թվականի երկրորդ եռամսյակում իրական աշխատավարձի աճը 2008 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ կազմել է 12.5%: Աշխատանքի արտադրողականությունն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 14.4%-ով, որը պայմանավորված է ՀՆԱ-ի աճի տեմպերի (15.3%՝ հիմնական գներով) համեմատ զբաղվածության համեմատաբար քիչ նվազմամբ (1.1%):

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ: Տնտեսության արտաքին հատվածում պահպանվել են համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվում են Հայաստան ներհոսող տրանֆերտները և գործոնային եկամուտը, կրճատվում է նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը:

2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 1659.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 20.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ տեղի է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների կրճատում. արտահանումը նվազել է 45.9%-ով՝ կազմելով 281.4 մլն դոլար⁴, իսկ

⁴ ՖՕԲ գներով:

ներմուծումը կազմել է 1378.6 մլն դոլար՝ նվազելով 27.5%-ով⁵: Ներմուծման նվազումը, որը տեղի է ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած) հիմնականում պայմանավորված է և՛ բնակչության եկամուտների անկմամբ, և՛ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Նշենք նաև, որ ներմուծման անկում է արձանագրվել նաև ներդրումային բնույթ ունեցող ապրանքների գծով. հունվար-հունիսին ընդհանուր ներմուծման մեջ մոտ 21% կշիռ ունեցող «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի նվազումը 3.3 տոկոսային կետով նպաստել է ներմուծման անկմանը:

2009 թվականի հունվար-հունիս ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը կազմել է 884.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 183 մլն ԱՄՆ դոլարով կամ 17.1 %-ով և կազմելով առաջին կիսամյակի ՋՆԱ-ի 27.5%-ը՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 25.1%-ի դիմաց:


Հայաստանի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2009 թվականի հունիսին ԱՎԾ-ի նախնական տվյալներով կազմել է 225.3 մլն ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 2008 թվականի հունիսին գրանցվել էր առևտրային հաշվեկշռի 246.5 մլն դոլար պակասուրդ: Հունիսին ներմուծման ծավալը նախորդ տարվա հունիսի համեմատ կրճատվել է 17%-ով և կազմել 286.6 մլն դոլար: Արտահանումը նախորդ տարվա հունիսի համեմատ նվազել է 37.9%-ով՝ հասնելով 61.2 մլն դոլարի: Ընթացիկ տարվա մայիսի համեմատ հունիսին արտահանված ծավալները ավելացել են 37.9%-ով և ներմուծվել է 44.4%-ով ավել ապրանք՝ վկայելով արտաքին առևտրի որոշակի աշխուժացման մասին:

Աղյուսակ 2. Արտաքին առևտուրը ըստ ամիսների (մլն ԱՄՆ դոլար)

	Արտահանում	Ներմուծում	Առևտրային սալդո
Նոյեմբեր 2008	66.4	405.7	-339.4
Դեկտեմբեր 2008	49.6	441.2	-391.6
Հունվար 2009	34.2	220.1	-185.8
Փետրվար 2009	44.8	207.4	-162.6
Մարտ 2009	44.3	231.1	-186.7
Ապրիլ 2009	52.3	235.0	-182.7
Մայիս 2009	44.4	198.5	-154.0
Հունիս 2009	61.2	286.6	-225.3

⁵ ՍԻՖ գներով:

Գծապատկեր 3. ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդը հունվար-հունիս ամիսներից (մլն ԱՄՆ դոլար)



Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը⁶, որը 1997 թվականի առաջին կիսամյակի -0.6-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2005 թվականին հասնելով -0.3-ի, այնուհետև 2006-2008 թվականներին ցուցաբերել է վատթարացման միտում՝ համապատասխանաբար կազմելով -0.4, -0.4 և -0.6: Վերջին երեք տարիների ընթացքում նորմալացված հաշվեկշռի նման վարքագիծը պայմանավորված է եղել արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ արդյունք է եղել տնտեսությունում անընդհատ աճող սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև 2003 թվականից արժևորվող փոխարժեքի: 2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում նորմալացված հաշվեկշռի գործակիցը կազմել է -0.7՝ հիմնականում պայմանավորված արտահանման առաջանցիկ անկմամբ:


2009 թվականի հունվար-հունիսի արտահանման 45.9% նվազման ամենաբարձր՝ 17.7 տոկոսային կետը պայմանավորված է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման նվազմամբ, որը կազմել է 49.3%: Արտահանման նվազման 7.8 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», 7.4 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 6.6 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ծավալների անկմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 47.8, 47.7 և 48.2%:

⁶ Առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների արտահանման միջին հակումը 2009 թվականի հունվար-հունիսին կազմել է 9% (2008 թվականի առաջին կիսամյակում՝ 12%): Ներմուծման միջին հակումը կազմել է 43%՝ նախորդ տարվա 45%-ի դիմաց:

2009 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով գրանցված արտահանման և ներմուծման անկման հետևանքով զգալի նվազել է ներմուծման ծածկումը՝ արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման ընդամենը 20.4%-ը (տե՛ս գծապատկեր 3): Սակայն պետք է նշել, որ դա պայմանավորված է այն հանգամանքով Հայաստանի արտահանման զգալի մասը հումքային բնույթի ապրանքներ են, որոնց միջազգային գներն էապես նվազել են՝ հանգեցնելով արտահանման դոլարային ծավալների զգալի նվազման:

Գծապատկեր 3. 1996-2009 թվականների առաջին կիսամյակների ներմուծման ծածկման գործակիցը⁷, տոկոսներով




2009 թվականի առաջին կիսամյակի ՀՀ ներճյուղային⁸ առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով վերջին տարիների համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին:

⁷ Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):

⁸ Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից արտաքին աշխարհի պահանջները բավարարելու մասին, թեև դիտվել է նաև երկկողմանի բացասական առևտրային մնացորդ արվեստի ստեղծագործությունների և ոչ թանկարժեք մետաղների և դրանցից իրերի մասով:

Գծապատկեր 4. 2009 թվականի առաջին կիսամյակի ներճյուղային առևտուրը




Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ համեմատաբար միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2009 թվականի առաջին կիսամյակի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 33.4%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 30.2%-ը՝ ԵՄ երկրներին, 2008 թվականին համապատասխան ժամանակահատվածի ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 30.5 և 38.5 տոկոս: ԵՄ երկրների ապրանքաշրջանառության անկումը 2009 թվականի հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կազմել է 46%, իսկ ԱՊՀ երկրների՝ 25%: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկվել էին Գերմանիան (առևտրաշրջանառության 7.6%-ը), Չինաստանը (7.3%), ԱՄՆ-ն (5.1%), Թուրքիան (4.2%), Իտալիան (3.4%), Իրանը (3.4%), Բուլղարիան (3.4%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (23.7%), Ուկրաինան (5.2%), Վրաստանը (3%): Վերջիններին

բաժին է ընկել 33 և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության 95.4%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Փոխարժեք: Նախորդ տարիներին ձևավորված փոխարժեքի արժևորման միտումները տարեսկզբից դադարել են: Մասնավորապես՝ եթե ընթացիկ տարվա հունվար ամսին դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 305.5, ապա հունվար-հունիսին այն կազմել է 348.04 դրամ՝ արժեզրկվելով 43 դրամով 2008 թվականի նույն ժամանակահատվածում 1 դրամով արժեզրկման դեպքում: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել իր հավասարակշիռ մակարդակից շեղումով՝ պայմանավորված մեր տնտեսության և համաշխարհային տնտեսության միտումներով: Նախորդ տարվա հունվար-հունիսի միջինի նկատմամբ գրանցվել է դրամի 13.2% արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի գրեթե նույն չափով արժևորման դինաց (13.8%): Իսկ իրական արտահայտությամբ դրամը շարունակում է մնալ արժևորված (թեև արժևորման միտումները նվազել են): Պատճառն այն է, որ մեր գործընկեր երկրներում հիմնական արժույթների նկատմամբ պահանջարկն ավելի մեծ է, քան մեր մոտ: Գծապատկեր 5-ում ներկայացված է ՀՀ դրամի փոխարժեքի միջինացված շարժընթացը տնտեսության համար կարելուր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ՝ անվանական և իրական արտահայտությամբ:

Գծապատկեր 5. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների⁹ միջին արժևորումը 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում



⁹ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարելուր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը եւ կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տենդենցների կողմնորոշիչ հետետևություններ անելու համար: Բացի դրանից այն հիմնական ցուցանիշն է, որն բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր եւ գործընկեր երկրների միջեւ հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:

Իրական արդյունավետ փոխարժեքը 2009 թվականի առաջին կիսամյակի միջինով արժևորվել է 4.1%-ով, վկայելով միջազգային շուկաներում հայրենական ապրանքների գնային մրցունակության անկման մասին: Այնուհանդերձ տարեսկզբի համեմատ վերջինս դրսևորել է նվազման միտում: Ընդ որում, անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորումը գերազանցել է իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը՝ կազմելով 7.2%, ինչը վկայում է, որ ներքին գների աճի համեմատ գործընկեր-երկրների գնաճը նշված ժամանակահատվածում առաջանցիկ էր: Նշենք նաև, որ 2009 թվականի հունիսին 2008 թվականի դեկտեմբերի համեմատությամբ իրական արդյունավետ փոխարժեքն արժևորվել է 13.0 տոկոսով, իսկ անվանական արդյունավետ փոխարժեքը՝ 15.1%-ով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

2009 թվականի երկրորդ եռամսյակում փողի բազան կազմել է 407.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 1.2%: Նույն ժամանակահատվածում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 24.6%, իսկ առևտրային բանկերի թղթակցային հաշիվները և պարտադիր պահուստները ԿԲ-ում աճել են 116.6%: Կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նվազել է 19.7 տոկոսային կետով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ կազմելով 63.5 %:

Նույն ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է մոտ 6.8%, ընդ որում դրամային ավանդների նպաստումը եղել է բացասական՝ 14.7 տոկոսային կետ, իսկ արտարժույթային ավանդներինը՝ դրական 19.7 տոկոսային կետ: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի երկրորդ եռամսյակի դրությամբ կազմել են 553 մլրդ. դրամ, որից 73% արտարժույթով ավանդներն են: Նշենք նաև, որ տնտեսության դոլարայնացման աստիճանը (արտարժույթային ավանդներ/փողի զանգված), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 22.6.%, ինչը արտացոլվել է նաև տնտեսության վարկավորման ցուցանիշի վարքագծում: Բանկային համակարգից դուրս կանխիկը դրամական զանգվածի նվազմանը նպաստել է 11.8 տոկոսային կետով:

Թեև առևտրային բանկերի վարկերը 2009 թվականի երկրորդ եռամսյակում նվազել են շուրջ 20%-ով, այնուհանդերձ նախորդ տարվա հունիսի վերջի նկատմամբ վարկերի ընդհանուր ծավալը մնացել է գրեթե անփոփոխ (0.2% նվազում)¹⁰: Նույն ժամանակահատվածում բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվները աճել են

¹⁰ Սույն ցուցանիշում ներառված է ինչպես տնտեսության իրական հատվածի, այնպես էլ Կառավարության վարկավորումը:

13.5%-ով, զուտ ներքին ակտիվները՝ նվազել են 22.7%-ով, իսկ տնտեսության վարկավորմունը աճել է 14.9%-ով:

Առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2009 թվականի երկրորդ եռամսյակում կազմել են 18.64%՝ 2008 թվականի հունիսի 17.35% համեմատ: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի հունիսին ավանդների տոկոսադրույքը կազմել է 5.75%, ապա 2009 երկրորդ եռամսյակում այն աճել է 3.73 տոկոսային կետով (9.48%):

Տոկոսադրույքների համանման վարքագիծ է դրսևորվել նաև պարտքի շուկայում, 2009 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 8.84%, ապա 2009 թվականի երկրորդ եռամսյակում այն կազմել է 12.26%: 2009 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 38.1 մլրդ դրամ: Հաշվետու տարում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 917 օր:

2009 թվականի երկրորդ եռամսյակում պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը 2.1 անգամ բարձր է եղել առաջարկից, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.97:

Երկրորդ եռամսյակի ցածր գնաճային միջավայրը թույլ է տվել ՀՀ ԿԲ-ին վարկավորումը խթանելու և տնտեսության վերականգնման տեմպերն արագացնելու համար ռեպո տոկոսադրույքը իջեցնել մինչև 6.00%¹¹:

Աղյուսակ 2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2009 թվականի երկրորդ եռամսյակում

Ամիսներ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Առևտրային բանկերի վարկեր	19.49	18.84	19.22	18.77	18.61	18.64
Առևտրային բանկերի ավանդներ	8.26	8.28	9.64	8.18	8.9	9.48
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	7.00	6.75	7.75	7.50	7.25	6.00

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ: 2009 թվականի առաջին կիսամսյակում պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 27.2%-ը, նախորդ


¹¹ 2008 թվականի հունիսին այն կազմել է 7.00%:

տարվա նույն ժամանակահատվածի 26.9%-ի դիմաց, իսկ հարկերը և տուրքերը կազմել են ՀՆԱ-ի 20.83%-ը նախորդ տարվա 21.75%-ի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով անվանական անկումը կազմել է 13.5%, իսկ հարկային եկամուտների և տուրքերի հավաքագրման առումով՝ 18.2%, ընդ որում անկում է գրանցվել բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքագրման գծով, բացառությամբ եկամտահարկի և հաստատագրված վճարների: Եթե համադրելու լինենք անվանական ՀՆԱ-ի 2009 թվականի հունիսի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրված 14.54% անկումը, ապա պարզ կդառնա, որ հարկային եկամուտների հավաքագրման առումով ներկայացված ցուցանիշի անկումը գերազանցում է ՀՆԱ-ի ցուցանիշը:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով 2009 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է աճի միտումներ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 8 տոկոսային կետի չափով, որը գերազանցապես բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին: Ընթացիկ ծախսերի գծով արձանագրված աճերը պայմանավորված են գերակա համարվող սոցիալական բնույթի ծախսերի և աշխատավարձերի մակարդակի պահպանմամբ: Կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ աճել է 2 տոկոսային կետով:


Հարկաբյուջետային ազդակը

Նախորդ տարվա ողջ ժամանակատվածում գրանցված ընդհանուր առմամբ չեզոք հարկաբյուջետային ազդակի դիմաց 2009 թվականի առաջին կիսամյակի արդյունքում ձևավորվել է 6.3% ընդլայնող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում, եկամուտների գծով գրանցվել է 2% զսպող ազդակ, իսկ ծախսերի գծով՝ 8.3% ընդլայնող ազդակ:




ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագրով 2009 թվականի առաջին կիսամյակում նախատեսվել էր ավելի քան 401.9 մլրդ դրամ բյուջետային եկամուտների ստացում: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսության մեջ արձանագրված միտումները հաշվի առնելով՝ հարկաբյուջետային ծրագիրը վերանայվեց ՀՀ կառավարության կողմից, և առաջին կիսամյակում ծրագրված եկամուտների և ծախսերի մի մասի կատարումը հիմնականում տեղափոխվեց չորրորդ եռամսյակ: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների առաջին կիսամյակի ծրագիրը կազմեց շուրջ 328.7 մլրդ դրամ: Հաշվի առնելով նաև «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով և 11-րդ հոդվածի 3-րդ և 16-րդ կետերով սահմանված մուտքերը՝ ծրագիրը կազմում է ավելի քան 337.2 մլրդ դրամ, որի դիմաց փաստացի ստացվել են շուրջ 304.3 մլրդ դրամի եկամուտներ կամ ծրագրվածի 90.2%-ը: Ընդ որում, հարկերն ու տուրքերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները և պաշտոնական դրամաշնորհները զիջել են ծրագրված ցուցանիշները համապատասխանաբար 9.6, 4.2 և 51.2 տոկոսով: Միևնույն ժամանակ, այլ եկամուտների գծով արձանագրվել է ծրագրի 5.6%-ով գերազանցում: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 13.5%-ով կամ 47.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հարկերի ու տուրքերի և պաշտոնական դրամաշնորհների համապատասխանաբար 18.2 և 11.4 տոկոսով նվազմամբ: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների և այլ եկամուտների գծով արձանագրվել է մուտքերի աճ՝ համապատասխանաբար 2.6 և 30.5 տոկոսով:




Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում 4.4 տոկոսային կետով նվազել է հարկերի ու տուրքերի տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 2.5, 0.1 և 1.9 տոկոսային կետով:

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ և պետական տուրք

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներն ու պետական տուրքը կազմել են ավելի քան 233.1 մլրդ դրամ՝ 90.4%-ով ապահովելով ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքը նվազել են 18.2%-ով կամ 51.8 մլրդ դրամով: Ընդ որում, հարկատեսակների մեծամասնության գծով արձանագրվել է մուտքերի աճում:



2009 թվականի առաջին կիսամյակում դրական փոփոխություն է գրանցվել հարկերի կառուցվածքում ուղղակի հարկերի տեսակարար կշռի ավելացման առումով: Այսպես, շահութահարկի և եկամտահարկի տեսակարար կշիռները հարկերի ու տուրքերի մեջ ավելացել են 3.1-ական տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 19.4% և 11.5%: Համապատասխանաբար 4.8 տոկոսային կետով նվազել է ավելացված արժեքի հարկի տեսակարար կշիռը:

Հարկային եկամուտների ու պետական տուրքի 44.9%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է շուրջ 104.8 մլրդ դրամ և 26%-ով կամ 36.9 մլրդ դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից ավելի քան 70.6 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 34.2 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նվազել են և՛ ներմուծումից, և՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն ունենալ 2009 թվականի առաջին կիսամյակի բյուջեի եկամուտների վրա: Մասնավորապես.

- սահմանվել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 մլն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 մլն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 մլն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար.

- ֆիզիկական անձանց համար սահմանվել են ԱԱՀ-ով հարկվող՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքներ, մասնավորապես՝ օրենքի համաձայն

ապրանքի մատակարարում է համարվում նաև ֆիզիկական անձանց պատկանող՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (այդ թվում՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի և հողերի) օտարումը (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում դրանց ներդրումը)։

- մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում։

- շենքերի և շինությունների օտարման դեպքում կիրառվող՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելու սկզբունքը տարածվել է նաև անավարտ և կիսակառույց շինությունների վրա, ինչպես նաև ավելացվել է, որ անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման գործարքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, բայց ոչ պակաս գույքահարկով հարկման նպատակով՝ օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի բաժնեմասին համապատասխանող արժեքի հինգ տոկոսից՝ հաշվարկված տարեկան կտրվածքով։

- թույլատրվել է ԱԱՀ-ի հաշվանցում կատարել որոշակի կանխիկ վճարումներ կատարելու դեպքում։ Այսպես, արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հարկային հաշիվներում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների

համար՝ 3 մլն դրամը: Միանվագ գործարքի գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) 300 հազար դրամը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումների դեպքում, իսկ ամսվա ընթացքում 300 հազար դրամը չգերազանցող բոլոր միանվագ գործարքների ընդհանուր գումարը 3.0 մլն դրամը գերազանցելու դեպքում սահմանված կարգով հաշվանցման ենթակա է այն գործարքի ԱԱՀ-ի ամբողջ գումարը, որի արժեքի հանրագումարով չի գերազանցվել 3 մլն դրամի սահմանաչափը.

- մինչև 2012 թվականի հունվարի 1-ը՝ ոռոգման ջրի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է ձեռք բերված ու մատակարարված ապրանքների և մատուցված ու ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով.

- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳԱԱ-8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8441, 8452 (բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 250510, 250900, 251820, 2836, 39162010, 76041090, 8419, 8426, 8429, 8430, 8435, 8443, 8478, 8479, 85023100, 870410 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է 300 մլն դրամը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող նշված ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով.

- անմիջական արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված ձեռագործ գորգերի (ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի 570110, ԱՏԳԱԱ-ի 570210) իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 8.2%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 19.1 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 12.6 մլրդ դրամ, որից 5.9 մլրդ դրամը՝ բենզինի և

դիզելային վառելիքի, 5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 6.4 մլրդ դրամ, որից 3.6 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկը նվազել է 8.6%-ով կամ 1.8 մլրդ դրամով: Ընդ որում, առավելապես նվազել են հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերը:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն ունենալ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների վրա՝

- գինեջուրը և խաղողի գինեջուրից ստացված խաղողի սպիրտը հանվել են ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից.
- տարանջատվել են Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափերը: Վերջիններիս համար սահմանվել են ավելի բարձր դրույքաչափեր:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 19.4%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 45.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 2.7%-ով կամ 1.3 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական ձեռնարկությունների և ոչ ռեզիդենտների կողմից վճարված շահութահարկի նվազմամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ զգալի աճ է արձանագրվել ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի գծով՝ կազմելով 47.9% կամ 2.3 մլրդ դրամ: Ավելացել են նաև պետական ձեռնարկությունների կողմից վճարված, մեկ տոկոս դրույքաչափով, ինչպես նաև ոչ ռեզիդենտների կողմից աղբյուրի մոտ վճարված շահութահարկի մուտքերը՝ համապատասխանաբար 17.9, 11.9 և 55.3 տոկոսով:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն գործել հաշվետու ժամանակահատվածում շահութահարկի մուտքերի վրա: Մասնավորապես՝

- ԱԱՀ վճարող չհամարվողներին հնարավորություն է տրվել հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերը նվազեցնել տվյալ հաշվետու տարում.
- ԱԱՀ վճարող չհամարվողներին թույլատրվել է կատարված բոլոր ծախսերը նվազեցնել առանց հաշվի առնելու սահմանված նորմաները, բացառությամբ

օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, որոնք նվազեցվում են հատուցման գումարների չափով.

- 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելին՝ համախառն եկամտի 10%-ից.

- համախառն եկամուտը նվազեցվում է Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերի չափով, որոնց համար հարկային մարմիններին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.4 հոդվածով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասով), և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում.

- հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5%-ից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն.

- ԱԱՀ վճարող չհամարվողները կարող են շահութահարկի կանխավճարներ չկատարել:

- ոչ ռեզիդենտի՝ Համահայկական բանկից ստացված շահաբաժինները հարկվում են զրո տոկոս դրույքաչափով՝ անկախ 57-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասի «ա»-«ե» ենթակետերով սահմանված պայմանների առկայությունից.

- շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 26.8 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի ու տուրքերի 11.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 12.6%-ով կամ 3 մլրդ դրամով:

Եկամտահարկի մուտքերի վրա 2009 թվականի առաջին կիսամյակում հնարավոր ազդեցություն են գործել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված հետևյալ փոփոխությունները.

- անձնական նվազեցումը սահմանվել է 30000 դրամ.
- մինչև փոփոխությունը հարկային գործակալը առանց հիմնավորող փաստաթղթերի ապրանքներ ձեռք բերելիս իրականացնում էր հարկի պահում առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար՝ 3%, այլ կազմակերպությունների համար՝ 15% դրույքաչափով: Փոփոխությունից հետո այդ պահումն իրականացվում է բոլոր կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար միասնական՝ 11% դրույքաչափով.

- 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելին՝ համախառն եկամտի 10%-ից.

- հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս՝ զեղչի ձևով ստացված եկամտի չափով, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով.

- Հայաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում նաև ցանկացած այլ հիմքով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները.

- հարկվող եկամուտը որոշելիս ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուների համախառն եկամուտը նվազեցվում է ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է ավելի քան 11.8 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 5.1%-ը և 23.3%-ով կամ 3.6 մլրդ դրամով գիջելով 2008 թվականի նույն ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից զանձված հաստատագրված վճարները կազմել են ավելի քան 10.9 մլրդ դրամ՝ 21.7%-ով կամ 1.9 մլրդ դրամով գերազանցելով 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է խաղատների գործունեության կազմակերպման, դրամական շահույնով խաղային ավտոմատների շահագործման, տրանսպորտային միջոցների գազալցման, հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման և առևտրի իրականացման վայր կազմակերպելու համար զանձված գումարների աճով:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն ունենալ հաշվետու ժամանակահատվածի մուտքերի վրա: Մասնավորապես՝

- խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում ելակետային տվյալի 4000000-ապատիկը՝ նախկին 2500000-ապատիկի փոխարեն.

- այլ ավտոմատների համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում ելակետային տվյալի 125000-ապատիկը՝ նախկին 75000-ապատիկի փոխարեն.

- անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահույնով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ նախկին 50000-ապատիկի փոխարեն.

- խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 25%-ի չափով՝ նախկին 20%-ի փոխարեն.

- տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ նախկին 50000-ապատիկի փոխարեն.

- անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ նախկին 50000-ապատիկի փոխարեն:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 382.8 մլն դրամ պարզեցված հարկ, որը 88.3%-ով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ պայմանավորված 2009 թվականի հունվարի 1-ից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 2.2 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 47.7%-ով կամ 2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման, այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող բնապահպանական վճարների նվազմամբ:

2009 թվականի առաջին կիսամյակում այլ հարկերից պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 3.6 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 137.4 մլն դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 1.3 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 413.6 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 608.3 մլն դրամ՝ հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները, 467.2 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունները, 711 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները և 6.3 մլն դրամ՝ արտոնագրային վճարները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերը նվազել են 65%-ով կամ 6.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ընթացիկ տարում «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի գծով վճարումներ չեն կատարվել, ինչպես նաև կոնցեսիոն վճարի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական տուրքի գծով բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 8.3 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում ծրագրված մուտքերի 77.9%-ը: Ծրագրի ցածր կատարողականն արձանագրվել է հիմնականում ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, պետական գրանցման և լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար գանձվող տուրքերի ցածր կատարողականի արդյունքում:

Նշված պատճառով գրանցվել է նաև պետական տուրքի անկում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որը կազմել է 16.2% կամ 1.6 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ որոշ տուրքերի գծով արձանագրվել են կանխատեսվածից բարձր ցուցանիշներ: Մասնավորապես, ծրագիրը գերազանցել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների (8.6%-ով), գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նմուշների, ապրանքների ծագման, տեղանունների, ֆիրմային անվանումների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողության (5.3%-ով), ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման (2.9 անգամ) համար գանձված տուրքերը:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2009 թվականի առաջին կիսամյակում պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 47.8 մլրդ դրամ, որից շուրջ 39.8 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 6.6 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 1.5 մլրդ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների կիսամյակային ծրագիրը կատարվել է 95.8%-ով, իսկ 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ դրանք աճել են 2.6%-ով կամ 1.2 մլրդ դրամով: «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումները կատարում են սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից:

Պաշտոնական դրամաշնորհներ

2009 թվականի առաջին կիսամյակում արտաքին դոնորների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 6.5 մլրդ դրամ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 48.8%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, ինչպես նաև այն հանգամանքով, որ առաջին կիսամյակի բյուջեով նախատեսված թվով 16 դրամաշնորհային ծրագրեր չեն կատարվել: ԱՄՆ կառավարության «Հազարամյակի

մարտահրավեր» հիմնադրամի կողմից հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 2.5 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրվածի 35.1%-ը: Շուրջ 1.3 մլրդ դրամ ստացվել է Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար՝ կազմելով ծրագրվածի 52%-ը: Նախատեսված ամբողջ ծավալը՝ 120 մլն դրամ մուտքագրվել է «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից: 1.2 մլրդ դրամ է տրամադրվել Եվրամիության պարենային ապահովության ծրագրի շրջանակներում, որի գծով 2009 թվականի պետական բյուջեում մուտքեր չեն նախատեսվել: Ավելի քան 325.7 մլն դրամ ստացվել է Լինսի հիմնադրամի կողմից՝ Երևանի փողոցների վերանորոգման (138.6 մլն դրամ), ճանապարհաշինության (105.5 մլն դրամ) և կրթական հաստատությունների վերականգնման (87.7 մլն դրամ) ծրագրերի շրջանակներում, որոնք նույնպես չեն նախատեսվել ընթացիկ տարվա պետական բյուջեում: Առաջին կիսամյակում շուրջ 148 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 11.4%-ով:

Այլ եկամուտներ


Պետական բյուջեի այլ եկամուտները 2009 թվականի առաջին կիսամյակում կազմել են շուրջ 16.8 մլրդ դրամ և ապահովել 105.6% կատարողական: Ընդ որում, գրեթե բոլոր եկամտատեսակների գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում: Մասնավորապես՝ իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից նախատեսված 2.3 մլրդ դրամի դիմաց ստացվել են շուրջ 2.7 մլրդ դրամի մուտքեր, ռեզիդենտներին պետության տրամադրած վարկերի օգտագործման տոկոսավճարների գծով նախատեսված 106.3 մլն դրամի դիմաց ստացվել է ավելի քան 455.9 մլն դրամ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի գծով նախատեսված 60 մլն դրամի դիմաց ստացվել է 214.4 մլն դրամ, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով նախատեսված 1.5 մլրդ դրամի դիմաց ստացվել է 1.6 մլրդ դրամ: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել

Են 30.5%-ով կամ 3.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման վճարի և իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի աճով, ինչպես նաև ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից կատարված վճարումներով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագրով 2009 թվականի առաջին կիսամյակում նախատեսվել էր շուրջ 450.9 մլրդ դրամ ծախսերի կատարում, որն այնուհետև պակասեցվեց՝ սահմանվելով 420.4 մլրդ դրամ: Փաստացի ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 381.5 մլրդ դրամ, մասնավորապես՝ 323.6 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 57.9 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Պետական բյուջեի ծախսերի կիսամյակային ծրագիրը կատարվել է 90.7%-ով, ընդ որում, շեղումների 67.5%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին: Բյուջետային ծախսերի ծրագրից փաստացի ցուցանիշի շեղումը մեծ մասամբ արտաքին աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականի հետևանք է:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 11.8%-ով կամ 40.1 մլրդ դրամով², ինչը հիմնականում պայմանավորված է շենքերի և շինությունների շինարարության ու ձեռքբերման, կենսաթոշակների և պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերի ավելացմամբ:

² ՀՀ 2009թ. պետական բյուջեում միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարման ծախսերը, որոնք 2008 թվականին ներառված էին բյուջեի ծախսերում, ընդգրկվել են պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում, ուստի համեմատությունը կատարվել է 2008 թվականի համադրելի ցուցանիշի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերի կիսամյակային ծրագիրը կատարվել է 92.5%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նշված ծախսերն աճել են 7.9%-ով կամ 23.8 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 31.8 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով ծրագրի 89.1%-ը, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 17.1%-ով: 2 մլրդ դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներին: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 66.3 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 92.9%-ը և 12.9%-ով գերազանցում է 2008 թվականի առաջին կիսամյակի փաստացի ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 5.9 մլրդ դրամ է տրամադրվել պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 86%-ը: Մասնավորապես՝ 4.2 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 1.7 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 11.5%-ով՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Անցած կիսամյակում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 8.5 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 95.3%-ը: Նշված գումարից շուրջ 8 մլրդ դրամ տրամադրվել է պետական կազմակերպություններին, 477 մլն դրամ՝ ոչ պետական կազմակերպություններին: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաները նվազել են 16.2%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 10.8%-ը կամ 35.1 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները: Մասնավորապես՝ 13.7 մլրդ դրամ տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Համայնքների համար նախատեսված այլ ընթացիկ դրամաշնորհներին տրամադրվել են 601.1 մլն դրամ, որը կազմել է կիսամյակային ծրագրի 98.3%-ը: Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել են 7.7 մլրդ դրամ ընթացիկ դրամաշնորհներ, որը կազմել է կիսամյակային ծրագրի 98.3%-ը: Իսկ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ դրամաշնորհները կազմել են 2.3 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 98.4%-ը: Այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել են 6.9 մլրդ դրամ, որը 28.6%-ով զիջում է կիսամյակային ծրագրով հաստատված ցուցանիշը: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ դրամաշնորհները նվազել են 1.9%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում շուրջ 59 մլրդ դրամ է տրամադրվել այլ ծախսերին՝ կազմելով կիսամյակային ծրագրի 87.8%-ը և 4.6%-ով զիջելով 2008 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 36.2%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 117 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 96.6%-ը: Մասնավորապես՝ 87.2 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 29.8 մլրդ դրամ՝ նպաստներին, որոնք կազմել են ծրագրի համապատասխանաբար 98.4%-ը և 91.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 13.8%-ով և 22.5%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 57.9 մլրդ դրամ կամ ծրագրի 82.1%-ը: Մասնավորապես՝ 63.9 մլրդ դրամ տրամադրվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ կազմելով առաջին կիսամյակի ծրագրի 80.9%-ը և 31.8%-ով գերազանցելով 2008 թվականի ցուցանիշը: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 6 մլրդ դրամ՝ ծրագրի կատարումն ապահովելով 70.7%-ով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն աճել են 39.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է շենքերի և շինությունների ձեռքբերման ու շինարարության ծախսերի աճով:

Գործառական դասակարգում

2009 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 45.4 մլրդ դրամ՝ 83.3%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ», «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասերի գծով: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը նվազել են 1.4%-ով կամ 632.6 մլն դրամով:

Օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 5.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 88.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նշված մարմինների պահպանման, ինչպես նաև վարչական օբեկտների հիմնանորոգման ծրագրերի ցածր

կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 8.7%-ով:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 11 մլրդ դրամ՝ նախատեսված 16.6 մլրդ դրամի փոխարեն: Շեղումը հիմնականում առաջացել է ավելացված արժեքի հարկի վերադարձի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի, ինչպես նաև պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերում: Հարկ է նշել, որ առաջին կիսամյակում ավելացված արժեքի հարկի գծով ընդհանուր առմամբ վերադարձվել է ավելի քան 8.5 մլրդ դրամ, որից 3.7 մլրդ դրամն իրականացվել է եկամուտների պակասեցման միջոցով, և ծախսերի գծով առաջացել է 2.2 մլրդ դրամ տնտեսում: Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզազեղումների տրամադրման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 14.4%-ով՝ կազմելով 74.8 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում 3.2 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին հարաբերությունների ծրագրերին, որը կազմել է առաջին կիսամյակի ծրագրային հատկացումների 90.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարման ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաքին հարաբերությունների ծախսերը նվազել են 1.4%-ով:

Ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 819.7 մլն դրամ կամ նախատեսվածի 84.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասի ցածր կատարողականով, որի գծով նախատեսված 486.6 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 386.4 մլն դրամ: Մասնավորապես՝ չեն օգտագործվել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների համար նախատեսված միջոցները 50 մլն դրամի չափով: 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման համար նախատեսված 20.3 մլն դրամի փոխարեն իրացվել է 7 մլն դրամ:

Խմբի ծախսերից 179.9 մլն դրամն ուղղվել է աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայություններին, որը կազմել է առաջին կիսամյակի ծրագրային հատկացումների 91.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է

քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման հետ կապված ծախսերի թերակատարմամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 11.5%-ով՝ հիմնականում պայմանավորված քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերի աճով:

2009 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր բնույթի այլ ծառայություններին տրամադրվել է 253.3 մլն դրամ, որը կազմել է առաջին կիսամյակի ծրագրային հատկացումների 88.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 1.7%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերն աճել են 4.9%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 2.4 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 95%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի և ԱՄՆ կառավարության աջացությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 92.5% և 60.7%: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքների ծախսերն աճել են 31.7%-ով:

Առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին տրամադրվել է 809.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 69.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով, որը կազմել է ընդամենը 18% (74.6 մլն դրամ): 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերը նվազել են 20.3%-ով:

Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 69.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր

անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի (67%), ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացման (24%) և արտաքին աջակցությամբ իրականացվող հինգ դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Արդյունքում այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նվազել են 30.3%-ով:

Պետական պարտքի գծով գործառնություններին տրամադրվել է 5.9 մլրդ դրամ, որը կազմել է առաջին կիսամյակի ծրագրային հատկացումների 86%-ը: 2009 թվականի առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 3.9 մլրդ դրամ, որը ծրագրվածից պակաս է 738.4 մլն դրամով: Տոկոսավճարի փաստացի ցուցանիշի տնտեսումը պայմանավորված է առաջին կիսամյակի ընթացքում նախատեսվածից ավելի քիչ ծավալով հետգնումների իրականացմամբ. նախատեսվում էր իրականացնել 10.0 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի հետգնում, բայց փաստացի հետ են գնվել 7.1 մլրդ դրամի պարտատոմսեր, որոնց դիմաց սպասարկման ծախսը կազմել է 537.1 մլն դրամ: Բացի այդ, երկրորդ եռամսյակի ընթացքում հետ գնվեցին 2008 թվականի փետրվարին թողարկված ուղենիշային պարտատոմսերը, որոնց արժեկտրոնային եկամտաբերությունը 7.5% է, տեղաբաշխումների միջին եկամտաբերությունը՝ 9.43%, իսկ դրանք հետ գնվեցին 10.0%-ով, որի արդյունքում նույնպես առաջացավ տոկոսավճարի տնտեսում: 5.8% տնտեսում է արձանագրվել նաև արտաքին պարտքի սպասարկման ծախսերում, որոնք կազմել են 1.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 19.9%-ով՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվել են շուրջ 14 մլրդ դրամի ընդհանուր բնույթի տրանսֆերտներ՝ ապահովելով 99.9% կատարողական և 29.3%-ով գերազանցելով 2008 թվականի նույն ցուցանիշը: Հատկացված գումարից 13.9 մլրդ դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով:

2009 թվականի առաջին կիսամյակում պաշտպանության բնագավառին հատկացվել է շուրջ 51.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 89.6%-ով կատարում:

Մասնավորապես, 48.9 մլրդ դրամ հատկացվել է ռազմական պաշտպանությանը, շուրջ 1.9 մլրդ դրամ՝ այլ դասերին չպատկանող պաշտպանական ծախսերին, 56.2 մլն դրամ՝ արտաքին ռազմական օգնության խմբին: Նախորդ տարվա համեմատ պաշտպանության ծախսերը նվազել են 5.8%-ով:

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 28 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 85.1% կատարողական: Ընդ որում, բոլոր հինգ խմբերում առկա են ծրագրից շեղումներ, որոնց գերակշիռ մասը բաժին է ընկել ոստիկանության և ազգային անվտանգության դասերին:

Բաժնի ծախսերի 68.5%-ն ուղղվել է հասարակական կարգի և անվտանգության պահպանության, 6.3%-ը՝ փրկարար ծառայության, 14.3%-ը՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, 3.3%-ը՝ դատախազության, 7.7%-ը՝ կալանավայրերի ծախսերի ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում 19.1 մլրդ դրամ տրամադրվել է հասարակական կարգի և անվտանգության բնագավառի ծրագրերին՝ նախատեսված 22.8 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 14.3 մլրդ դրամ տրամադրվել է ոստիկանությանը՝ կազմելով նախատեսվածի 83.8%-ը: Ավելի քան 4.8 մլրդ դրամ տրամադրվել է ազգային անվտանգությանը՝ կազմելով ծրագրի 85%-ը: Ոստիկանության ծախսերի գծով շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված միջոցների պակաս օգտագործմամբ, հասարակական կարգի պահպանության ապահովման, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների հաշվին կատարված ծախսերի կատարողականներով, որոնք կազմել են համապատասխանաբար 41%, 95.2% և 88.5%: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ հասարակական կարգի և անվտանգության ծախսերն ավելացել են 7.3%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում փրկարար ծառայության ծախսերը կազմել են շուրջ 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 90.5%-ով կատարում: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ նշված ծախսերն ավելացել են 44.6%-ով:

Դատական գործունեությանը և իրավական պաշտպանությանը տրամադրվել է շուրջ 4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 84.8%-ով կատարում: Շեղումը հիմնականում առաջացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի և դատարանների պահպանման ծախսերում, որոնք կազմել են համապատասխանաբար 1.2 մլրդ դրամ կամ 80.5% և 1.7 մլրդ դրամ կամ 86.7%: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ դատական գործունեության և իրավական պաշտպանության ծախսերն աճել են 32.2%-ով:

Դատախազության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 923.4 մլն դրամ կամ ծրագրի 83.1%-ը և 6.3%-ով գերազանցել 2008 թվականի առաջին կիսամյակի հատկացումները:

Ավելի քան 2.1 մլրդ դրամ է տրամադրվել կալանավայրերին՝ կազմելով ծրագրի 91.8%-ը: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ կալանավայրերի ծախսերը նվազել են 20.7%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերը կազմել են ավելի քան 43.1 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 97.5% կատարողական: Ընդ որում, ծրագրից զգալի շեղումներ են արձանագրվել գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության և տրանսպորտի խմբերում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների ծախսերն աճել են 46.4%-ով կամ շուրջ 13.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է էներգետիկայի և ոռոգման ծախսերի աճով:

2009 թվականի առաջին կիսամյակում շուրջ 953.8 մլն դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների խմբի ծրագրերին՝ ապահովելով ծրագրի 79.3% կատարողական:

Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով), այդ թվում արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի ցածր կատարողականով, որոնք համապատասխանաբար կազմել են 204.6 մլն և շուրջ 10.0 մլն դրամ՝ 80.0%-ով և 14.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Բացի այդ, «Գյուներու Տեխնոպարկի գործունեության իրականացման» և «Շանհայ էքսպո 2010» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության» ծրագրերի գծով նախատեսված միջոցները (համապատասխանաբար 44 մլն դրամ և 74.3 մլն դրամ) չեն օգտագործվել: Ամբողջությամբ կատարվել են «Հիդրոօդերևութաբանական ծառայություններ» (233.4 մլն դրամ), «Տնտեսական գործունեության արդյունավետ

վարման և աջակցման միջոցառումների իրականացում» (63.5 մլն դրամ), «Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» (309.7 մլն դրամ), «Արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանում» (34.1 մլն դրամ) և «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» (12.0 մլն դրամ) ծրագրերը:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության խմբին տրամադրվել է շուրջ 11.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 70%-ը: Նշված գումարից շուրջ 4 մլրդ դրամը տրամադրվել է գյուղատնտեսության, 520.5 մլն դրամը՝ անտառային տնտեսության, 6.9 մլրդ դրամը՝ ոռոգման ծրագրերի ֆինանսավորմանը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, մասնավորապես՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն ավելացել են 24.6%-ով կամ 2.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ոռոգման բնագավառում կատարված ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության դասի ծախսերը կազմել են շուրջ 4.0 մլրդ դրամ կամ ծրագրվածի 73.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» ծրագրերի ցածր կատարողականով, որոնց շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 229.0 և շուրջ 471.9 մլն դրամի ծախսեր՝ նախատեսված 932.5 մլն դրամի և 855.3 մլն դրամի փոխարեն: Գյուղատնտեսության ոլորտում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 24 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են հինգ վարկային և չորս դրամաշնորհային ծրագրեր: Այս դասում նախատեսված ծրագրերից չորսի գծով հաշվետու ժամանակահատվածում ծախսեր չեն իրականացվել: Նշենք, որ գյուղատնտեսության ոլորտի մի շարք ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական, այդ թվում՝ «Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումներ» (16.0 մլն դրամ), «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում» (շուրջ 87 մլն դրամ), «Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր

փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում» (շուրջ 33.4 մլն դրամ) և «Հողերի մելիորատիվ վիճակի պահպանման և բարելավման միջոցառումներ» (60.0 մլն դրամ):

Հաշվետու ժամանակահատվածում անտառային տնտեսության ծախսերը կազմել են շուրջ 520.5 մլն դրամ կամ նախատեսվածի 93.1%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են չորս ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական ծառայությունների իրականացման համար կատարված հատկացումները, որոնց համար նախատեսվել և տրամադրվել է շուրջ 295.8 մլն դրամ: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անտառային տնտեսության ծախսերը նվազել են 5.3%-ով կամ 29.0 մլն դրամով:

2009 թվականի առաջին կիսամյակում շուրջ 6.9 մլրդ դրամ են կազմել ոռոգման ոլորտի ծախսերը՝ կազմելով ծրագրվածի 66.7%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են հինգ վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր: Նախատեսված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որի շրջանակներում օգտագործվել է նախատեսվածի 41.5%-ը կամ 1.6 մլրդ դրամ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պատվարների անվտանգության առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 355.2 և 772.0 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 34.4%-ը և 194%-ը: Ոռոգման համակարգի զարգացման առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 43.3 և 218.8 մլն դրամ կամ նախատեսվածի 50.6%-ը և 130%-ը:

Ցածր կատարողական է արձանագրվել նաև այս դասում «Ոռոգման համակարգերի վերանորոգում» (13.0%), «Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր» (38.1%), «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» (84.7%), «Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում, տեխնիկական վիճակի բարելավում» (92.8%) և «Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» (97.9%) ծրագրերի գծով: Նշենք նաև, որ «Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում» և «Զրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանման կարողությունների զարգացում» ծրագրերով ծախսերը չեն իրականացվել: 100%-ով կատարվել է ֆինանսական աջակցության տրամադրումը

ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին, որը կազմել է 2.6 մլրդ դրամ:

2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ ոռոգման ծախսերն ավելացել են 46.4%-ով:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառում 2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 18.9 մլրդ դրամ՝ 165.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի բարձր կատարողականով, որի շրջանակներում նախատեսված 7.1 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է 16.1 մլրդ դրամ: Հիմնականում նշված ծրագրի ֆինանսավորման հետ կապված՝ 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ արձանագրվել է վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերի աճ շուրջ 17.6 մլրդ դրամով:

Առաջին կիսամյակում ծրագրվածի 61.6%-ը կամ 13.9 մլն դրամ է օգտագործվել «Նավթամթերք և բնական գազ» դասի շրջանակներում, որը տրամադրվել է համայնքների բյուջեներին որպես սուբվենցիաներ:

Հաշվետու ժամանակահատվածում 48.2 մլն դրամ է տրամադրվել «Միջուկային վառելիք» դասին՝ կազմելով ծրագրի 59.7%-ը: Նշված գումարն ուղղվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի պահպանմանը և կարողությունների զարգացմանը:

2009 թվականի առաջին կիսամյակում 16.5 մլրդ դրամ են կազմել «Վառելիքի այլ տեսակներ» դասի ծախսերը՝ ապահովելով ծրագրվածի 214.3%-ը: Հատկացումներն ուղղվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երկու վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորմանը: Մասնավորապես՝ 16.1 մլրդ դրամ օգտագործվել է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի շրջանակներում՝ 125.9%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 146.7 մլն դրամի ծախսեր՝ 125.8%-ով գերազանցելով նախատեսվածը, իսկ քաղաքային ջեռուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 281.8 մլն դրամ կամ նախատեսվածի 57.1%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 2.3 մլրդ դրամ են կազմել էլեկտրաէներգիայի դասի ծախսերը՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 64.3%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության

աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագրի ցածր կատարողականով, որը կազմել է 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 66.4%-ը: Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերականգնման ծրագրի ծախսերը նախատեսված 168.9 մլն դրամի փոխարեն կազմել են 12.9 մլն դրամ: Տվյալ դասում շուրջ 136.8 մլն դրամ տրամադրվել է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով):

2009 թվականի առաջին կիսամյակում լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության ոլորտում ՀՀ պետական բյուջեից իրականացվել են շուրջ 3.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 15.4%-ը: Հատկացված միջոցները հիմնականում ուղղվել են «Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն» ծրագրի ծախսերին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 83.3%-ով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից 15.2 մլրդ դրամ է տրամադրվել տրանսպորտի բնագավառին՝ 71.1%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի դասի ծրագրերի ցածր կատարողականով: Խմբի ծախսերի 90.5%-ը կամ 13.8 մլրդ դրամը կազմել են ճանապարհային տրանսպորտի, 0.8%-ը կամ 124.1 մլն դրամը՝ օդային տրանսպորտի և 8.7%-ը կամ 1.3 մլրդ դրամը՝ խողովակաշարային և այլ տրանսպորտի ծախսերը, որոնք համապատասխանաբար 69.4, 52.8 և 100 տոկոսով ապահովել են կիսամյակային ծրագրի կատարումը:

Ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերի շեղումը ծրագրվածից հիմնականում պայմանավորված է պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման վարկային ծրագրի և ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականներով, որոնք կազմել են համապատասխանաբար 49.3%, 59.7%, 55.4% և 14.9%: Հարկ է նշել, որ տվյալ խմբում ընդգրկված՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիրը և կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման վարկային ծրագիրը կատարվել են համապատասխանաբար 106.3 և 442.9 տոկոսով: Հաշվետու ժամանակահատվածում 244.1 մլն դրամի միջոցներ են տրամադրվել «Լինսի» հիմնադրամի կողմից՝ «Երևանի փողոցների վերանորոգում»

(138.6 մլն դրամ) և «Ճանապարհների վերանորոգում» (105.5 մլն դրամ) ծրագրերի ֆինանսավորման նպատակով, որոնք 2009 թվականի բյուջեում չէին նախատեսվել: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ ճանապարհային տրանսպորտի ծախսերը նվազել են 4.8%-ով:

Օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում նույնպես արձանագրվել է ցածր կատարողական՝ 52.8% կամ 124.1 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի կատարման ցածր ցուցանիշով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ օդային տրանսպորտի ծախսերն ավելացել են 18.6%-ով:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.3 մլրդ դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Նշված գումարից 910.8 մլն դրամն ուղղվել է Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայություններին, 277.5 մլն դրամը՝ «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգմանը, 136.2 մլն դրամը՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղեվորափոխադրման ծառայություններին: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 10.6%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում կապի ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 215.6 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Կատարված հատկացումներն ուղղվել են հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ոլորտի ծախսերը նվազել 24.2%-ով:

Այլ բնագավառների (զբոսաշրջություն և զարգացման բազմանպատակ ծրագրեր) ծախսերը կազմել են 391.1 մլն դրամ կամ նախատեսվածի 113.1%-ը: Զբոսաշրջության ոլորտին պետական աջակցության նպատակով 2009 թվականի առաջին կիսամյակի բյուջեով նախատեսված 49.6 մլն դրամից օգտագործվել է 21.9 մլն դրամը, որն ուղղվել է Հայաստանը ներկայացնող վավերագրական ֆիլմի նկարահանմանը և միջազգային հեղինակավոր հեռուստաալիքներով հեռարձակմանը: Զբոսաշրջության աջակցության ծառայությունների համար նախատեսված 24.6 մլն դրամի ծախսերը չեն իրականացվել: 369.2 մլն դրամ տրամադրվել է զարգացման բազմանպատակ ծրագրերի դասի ֆինանսավորմանը, որի հաշվին իրականացվել են ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծախսերը՝ 24.7%-ով գերազանցելով

նախատեսվածը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 40.6%-ով կամ 267.7 մլն դրամով:

2009 թվականի առաջին կիսամյակում տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 51.2 մլն դրամ՝ 93.2%-ով ապահովվելով ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի հարցերի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին հատկացվել է 23.5 մլն դրամ, իսկ լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին՝ 27.7 մլն դրամ, որոնք ապահովել են համապատասխանաբար 100 և 88.1 տոկոս կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել 16.2%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների խմբի փաստացի ցուցանիշը կազմել է -4 մլրդ դրամ՝ ապահովվելով ծրագրի կատարումը 59.7%-ով: Ընդ որում, խմբի ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ ծրագրի 112.8%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքագրվել է 6 մլրդ դրամ կամ նախատեսված գումարի 70.7%-ը: Ծախսերի ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք կազմել են 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածից 90%-ով ավելին:

2009 թվականի առաջին կիսամյակում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 48.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, մասնավորապես, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերը չկատարելու հանգամանքով, ինչպես նաև Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 11.5%-ով կամ ավելի քան 138.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2009 թվականին Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմամբ և ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում «Աղբահանում» խմբում նախատեսված շուրջ 13 մլն դրամը տրամադրվել է «Ռադիոակտիվ թափոնների վնասագերծում» ՓԲԸ-ին՝ որպես պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի խմբում օգտագործված 53.6 մլն դրամն ուղղվել է օդի աղտոտման դեմ պայքարի ծրագրերին՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 93.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է օդի աղտոտվածության մոնիտորինգի դիտացանցի արդիականացման, մոնիտորինգային տվյալների ներկայացուցչության ապահովման ծառայությունների գծով ծախսերը չկատարելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն աճել են 10.5%-ով կամ 5.1 մլն դրամով՝ պայմանավորված ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայությունների ձեռք բերման ծախսերի աճով: Վերջիններս, ինչպես նաև թափոնների ուսումնասիրության ծառայությունների ձեռք բերման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 50.4 մլն դրամ և 3.2 մլն դրամ:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է ավելի քան 202.3 մլն դրամ՝ 12.6%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված միջոցները (շուրջ 1.2 մլրդ դրամ) չօգտագործելու հանգամանքով: Չեն կատարվել նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագիրը, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները, ձկան պաշարների համալրման գծով պետական պատվերի և Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծրագրերը, որոնց համար նախատեսվել էին համապատասխանաբար 49 մլն դրամ, 103.7 մլն դրամ, 36 մլն դրամ և 1.8 մլն դրամ միջոցներ: Համապատասխանաբար 9.6, 14.7 և 7 տոկոսով են կատարվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագիրը, «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ում տրանսպորտային սարքավորումների, սարքավորումների և ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերման և ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագրերը, որոնց շրջանակներում նախատեսված 39.6 մլն դրամի դիմաց օգտագործվել է 4.1 մլն դրամ:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի մյուս հինգ ծրագրերն իրականացվել են նախատեսված ծավալով, որոնց համար օգտագործվել է 198.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծախսերը նվազել են 3.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման, «Շիկահող» պետական արգելոցի և «Սոսիների պուրակ» պետական արգելավայրի պահպանության, պետական արգելոցում գիտական ուսումնասիրությունների անտառտնտեսական աշխատանքների կատարման և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների ձեռք բերման ծախսերի նվազմամբ:

2009 թվականի առաջին կիսամյակում շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ և ապահովել ծրագրի 99.7% կատարողական: Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով օգտագործվել է ավելի քան 344.1 մլն դրամ կամ ծրագրի 95.1%-ը: Հարկ է նշել, որ տվյալ խմբում նախատեսված ծրագրերից չորսը՝ «Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի ծառայություններ», «Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայություններ», «Սևանա լճի շրջակայքի ջրածածկվող անտառային տարածքների գույքագրման և քարտեզագրման ծառայություններ» և «Բնապահպանական նկատակային ֆոնդ» ծրագրերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով, որոնց շրջանակներում ընդհանուր առմամբ օգտագործվել է 25.4 մլն դրամ:

Խմբում ընդգրկված՝ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով արձանագրվել է նախատեսված ծավալների գերազանցում: Մասնավորապես՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 238.1 մլն դրամ և 198.4 մլն դրամ ծախսեր՝ 8.2 և 3.7 անգամ գերազանցելով նախատեսվածը: Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 73.5 մլն դրամ՝ 2.4 անգամ գերազանցելով ծրագիրը:

Շուրջ 203.8 մլն դրամ է ծախսվել Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի շրջանակներում, որոնց կատարողականը կազմել է 40.8%:

Խմբում ընդգրկված՝ թվով 12 ծրագրեր հաշվետու ժամանակահատվածում չեն կատարվել, որոնց համար նախատեսվել էին 84.3 մլն դրամի միջոցներ:

Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող՝ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 14.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման դրամաշնորհային ծրագրի ծախսերի աճով:

2009 թվականի առաջին կիսամյակում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 73%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերն աճել են 33.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է 2009թ. պետական բյուջեից Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի, ինչպես նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 563.5 մլն դրամ է տրամադրվել բնակարանային շինարարության ոլորտին՝ կազմելով ծրագրվածի 37.4%-ը: Շեղումը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով (16.4%-ով)՝ նախատեսված 1.1 մլրդ դրամի դիմաց կատարվել են 184.5 մլն դրամ ծախս: Շուրջ 379 մլն դրամն ուղղվել է անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության տրամադրմանը՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության ծախսերը նվազել են 68.8%-ով, որը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նվազմամբ:

Բաժնի ծախսերի 67.5%-ն ուղղվել է ջրամատակարարման բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 5.4 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 76.4%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով: Խմբում ներառված մեկ վարկային և հինգ դրամաշնորհային ծրագրեր չեն կատարվել, որոնց

համար առաջին կիսամյակի ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսվել էր շուրջ 1.8 մլրդ դրամի օգտագործում: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 445 մլն դրամ կամ նախատեսվածի 33%-ը, Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 87.2 մլն դրամ կամ նախատեսվածի 52.4%-ը, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի ծախսերը՝ 21.2 մլն դրամ կամ նախատեսվածի 67.4%-ը: Խմելու ջրի մատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 35.2 մլն դրամ կամ նախատեսվածի 16%-ը: 54.5%-ով են կատարվել համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների ծախսերը, որոնք կազմել են 57.7 մլն դրամ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում օգտագործվել է 785 մլն դրամ՝ 12.5 անգամ գերազանցելով նախատեսվածը: Ծրագրվածի համապատասխանաբար 74.8 և 12.5 տոկոսով գերազանցում է արձանագրվել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրերի գծով, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 944 մլն դրամ և 2.1 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ամբողջությամբ կատարվել է «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սուբսիդավորումը՝ համապատասխանաբար 431.7 մլն դրամի և 19.2 մլն դրամի չափով:

2009 թվականի առաջին կիսամյակում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 51.7 մլն դրամ կամ ծրագրի 92.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.6%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում Մեծամորի ռեզերվային հորի կառուցմանն ուղղվել է շուրջ 12.1 մլն դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 88.9%-ը:

2008 թվականի համեմատ ջրամատակարարման բնագավառի ծախսերն աճել են 71.7%-ով կամ 2.3 մլրդ դրամով, որը պայմանավորված է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի՝ փողոցների լուսավորման խմբում օգտագործվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով, որոնք ապահովել են 82.8% կատարողական, սակայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 2.6 անգամ:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների շրջանակներում կատարվել են շուրջ 1.8 մլն դրամի ծախսեր՝ ապահովվելով ծրագրի կատարումը 59.7%-ով:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի գծով կատարվել են 821.6 մլն դրամի ծախսեր՝ ապահովվելով կիսամյակային ծրագրի 90.3%-ը: Վերջին երկու խմբերի կատարողականները մեծ մասամբ պայմանավորված են դրանցում նախատեսված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով: Սակայն նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ Երևանի համաքաղաքային ծախսերի գծով արձանագրվել է զգալի աճ՝ համապատասխանաբար 31.1 և 65.8 տոկոսով:

2009 թվականի առաջին կիսամյակում առողջապահության ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 21.8 մլրդ դրամ՝ ապահովվելով նախատեսվածի 87.1%-ը: Բաժնի ծախսերի 42.1%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 37.6%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 10.9%-ը՝ առողջապահության (այլ դասերին չպատկանող) ծառայությունների, 5.1%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների և 4.2%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռք բերման ֆինանսավորմանը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի, ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման և ՀՀ-ում Տուբերկուլոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 12.4%-ով՝ հիմնականում պայմանավորված բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների, մասնագիտացված բժշկական ծառայությունների և առողջապահական հարակից ծառայությունների և ծրագրերի ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում «Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ» խմբում դեղագործական ապրանքների ձեռքբերման նպատակով

պետական բյուջեից ծախսվել է շուրջ 928 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 49.2%-ը: Մասնավորապես՝ ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերը կազմել են շուրջ 795.3 մլն դրամ՝ նախատեսված 1.4 մլրդ դրամի փոխարեն: Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման և ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծրագրերն ունեցել են համապատասխանաբար 52.7% և 27.4% կատարողական, իսկ ինունականխարգելման ազգային ծրագրի գծով առաջին կիսամյակում նախատեսված 29.8 մլն դրամ ծախսերը չեն կատարվել:

2009 թվականի առաջին կիսամյակում արտահիվանդանոցային ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է ավելի քան 8.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 90.4%-ով կատարում: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ պարաբժշկական ծառայություններում ներառված՝ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի շրջանակներում նախատեսված 1.0 մլրդ դրամի փոխարեն ծախսվել է ընդամենը 425.4 մլն դրամ:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերի 41.7%-ը կամ 3.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական, 27.6%-ը կամ շուրջ 2.3 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական, 4.4%-ը կամ շուրջ 364.5 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 26.3%-ը կամ շուրջ 2.2 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը, որոնց կիսամյակային ծրագիրը կատարվել է համապատասխանաբար 99.7, 96.3, 96.8 և 73.9 տոկոսով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերն ավելացել են 9.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է մասնագիտական բժշկական ծառայությունների ծախսերի աճով:

Առաջին կիսամյակում հիվանդանոցային ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 9.2 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում նախատեսվածի 98.3%-ը: Խմբի ծախսերի 26.4%-ը կամ 2.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 29.7%-ը կամ ավելի քան 2.7 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների և 43.9%-ը կամ 4.0 մլրդ դրամը՝ բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների ծախսերը, որոնք համապատասխանաբար 98.3, 98.3 և 98.2 տոկոսով ապահովել են կիսամյակային ծրագրի կատարումը:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից 1.1 մլրդ դրամ տրամադրվել է հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը՝ 99.3%-ով ապահովելով նախատեսվածը: Խմբում ընդգրկված են 7 ծրագրեր, որոնց գծով նախատեսված միջոցներն ամբողջովին ծախսվել են, բացառությամբ հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների, որոնց կատարողականը կազմել է 98.8%:

Հաշվետու ժամանակահատվածում այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը կազմել են շուրջ 2.4 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 66.0%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 21 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են չորս վարկային և երեք դրամաշնորհային ծրագրեր: Նշենք, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերը խմբում ունեն մեծ տեսակարար կշիռ, և դրանց ցածր կատարողականով է (59.2%) հիմնականում պայմանավորված խմբի ծախսերի շեղումը ծրագրվածից: Մասնավորապես՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում օգտագործվել է 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 57.2% կատարողական, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են շուրջ 18.5 մլն դրամ կամ նախատեսվածի 35%-ը: ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում տվյալ խմբում կատարվել են 52.1 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 67.9%-ը: ՀԲ աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի կատարողականը կազմել է 25.8% կամ 22.4 մլն դրամ: Նույն ծրագրի շրջանակներում իրականացվող ճապոնական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 20.0 մլն դրամ կամ նախատեսվածի 87.3%-ը, իսկ Թռչնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 96.8%-ով՝ կազմելով շուրջ 185.5 մլն դրամ:

Նշված խմբի ծախսերում, բացի արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերից, համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն նաև գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը (շուրջ 355.8 մլն դրամ, կատարողականը՝ 73.2%), դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը (շուրջ 147.7 մլն դրամ, կատարողականը՝ 99.2%), ինպես նաև դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ծախսերը (121.8 մլն դրամ, կատարողականը՝ 97.2%):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերն ավելացել են 37.5%-ով կամ 651.1 մլն դրամով:

2009 թվականի առաջին կիսամյակում հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառներում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 7.1 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 90.7%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է արվեստի, մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների, թանգարանների և ցուցասրահների, հրատարակչությունների ու խմբագրությունների դասերում ընդգրկված ծրագրերի ցածր կատարողականի արդյունքում: Սակայն պետք է նշել, որ 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ծախսերն ավելացել են 9.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2009 թվականի պետական բյուջեից արվեստի և սպորտի ծրագրերի ֆինանսավորման աճով:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ավելի քան 864.1 մլն դրամ տրամադրվել է հանգստի և սպորտի ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 92.1%-ը: Այս դասի հատկացումների հիմնական մասը՝ 609.7 մլն դրամ, տրամադրվել է ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը, որը կազմել է ծրագրով նախատեսվածի 94.1%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանգստի և սպորտի ծախսերն աճել են 19.7%-ով՝ պայմանավորված 2009 թվականի պետական բյուջեից օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացման, Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովման, ինչպես նաև բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնության կազմակերպման և անցկացման ծախսերի ֆինանսավորմամբ:

2009 թվականի առաջին կիսամյակում մշակութային ծառայություններին հատկացվել է շուրջ 3.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 88.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արվեստի, մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների, թանգարանների և ցուցասրահների դասերում ընդգրկված ծրագրերի համեմատաբար ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 470.4 մլն դրամ տրամադրվել է գրադարաններին՝ ապահովելով նախատեսվածի 91.9%-ը: Նախորդ

տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրադարանների ծախսերն աճել են 2.4%-ով: 591.2 մլն դրամ է տրամադրվել թանգարաններին և ցուցահանդեսներին՝ կազմելով ծրագրի 85.2%-ը և 14.6%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը կազմել են 211.5 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 66.7%-ը՝ հիմնականում պայմանավորված մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների ցածր կատարողականով: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը նվազել են 39.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է մշակութային օբյեկտների շինարարության ծախսերի նվազմամբ:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով օգտագործվել է 333.8 մլն դրամ կամ կիսամյակի համար նախատեսված հատկացումների 93.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 18.4%-ով՝ հիմնականում պայմանավորված արխիվային ծառայությունների և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի աճով:

Արվեստի ոլորտի ֆինանսավորմանը տրամադրվել է ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 93.2%-ը: Տրամադրված միջոցների գերակշիռ մասը բաժին է ընկել թատերական ներկայացումներին (489.3 մլն դրամ), մշակութային միջոցառումների իրականացմանը (387.4 մլն դրամ), երաժշտարվեստի և պարարվեստի համերգներին (379.3 մլն դրամ), օպերային և բալետային արվեստի ներկայացումներին (262.5 մլն դրամ): 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ արվեստի ոլորտի ծախսերը աճել են 40.3%-ով:

Անցած ժամանակահատվածում ամբողջությամբ օգտագործվել են կինեմատոգրաֆիայի բնագավառի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 295.2 մլն դրամ և 8.8%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծախսերը:

2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 42.5 մլն դրամ կամ ծրագրի 37.3%-ը: Թերակատարման հիմնական պատճառը հուշարձանների վերանորոգման և վերականգնման ծրագրի ցածր կատարողականն է, որը կազմել է 15.9%: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման ծախսերը նվազել են 75.5%-ով:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով պետական բյուջեի

ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ 94.8%-ով ապահովելով ծրագրային հատկացումները և 1.2%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնավորապես՝ 1.8 մլրդ դրամ (98.1%) են կազմել հեռուստահաղորդումների, 265.9 մլն դրամ (76.6%)՝ հրատարակչությունների և խմբագրությունների, 30.9 մլն դրամ (100%)՝ տեղեկատվության ձեռք բերման ծախսերը: Հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերի շեղումը հիմնականում պայմանավորված է գրականության հրատարակման, վերջինիս աջակցության և հրատարակչական, տեղեկատվական ու տպագրական ծառայությունների ցածր կատարողականով:

Կրոնական և հասարակական այլ ծառայություններին 2009 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեից տրամադրվել է 167.4 մլն դրամ՝ նախատեսված 211.1 մլն դրամի դիմաց, որից 93.2 մլն դրամը հատկացվել է երիտասարդական ծրագրերին, 74.2 մլն դրամը՝ քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 80.2% և 78.2%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրոնական և հասարակական այլ ծառայությունների ծախսերը նվազել են 3.9%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում հանգստի, մշակույթի և կրոնի՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 180.7 մլն դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 91.9%-ը և 8.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Նշված միջոցներն ուղղվել են գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանն ու կարողությունների զարգացմանը:

2009 թվականի առաջին կիսամյակում կրթության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 50.1 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 95.4% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 9.4 մլրդ դրամ տրամադրվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը, որն ապահովել է ծրագրի 99.8% կատարողական: Նշված խմբում ներառված բոլոր ծրագրերը գրեթե ամբողջությամբ կատարվել են: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է նշված ծախսերի 24.5% աճ:

Անցած ժամանակահատվածում կրթության ոլորտի ծախսերի մոտ կեսն ուղղվել է միջնակարգ ընդհանուր կրթությանը: Այն կազմել է շուրջ 25.0 մլրդ դրամ, որից 17.9 մլրդ դրամը՝ հիմնական և 7.0 մլրդ դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծախսերն են: Միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերում ապահովվել է առաջին կիսամյակի բյուջեի 99.9% կատարողական: Ընդ որում, նշված խմբի գրեթե բոլոր ծրագրերը, բացառությամբ երկուսի, ամբողջությամբ կատարվել են: Համեմատաբար ցածր՝ 94.8% և 84.1% կատարողականներ են արձանագրվել միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության դասում ընդգրկված՝ ներառական կրթության և արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպման ծախսերում, որոնք կազմել են համապատասխանաբար 13.3 մլն դրամ և 225.1 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի 16.5% աճ:

Հաշվետու ժամանակահատվածում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծախսերը կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 98.5%-ը, որից 903.7 մլն դրամն ուղղվել է նախնական մասնագիտական (արհեստագործական), 1.3 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 21.5%-ով կամ 394.3 մլն դրամով:

2009 թվականի առաջին կիսամյակում բարձրագույն կրթության բնագավառի ծախսերը կազմել են 4.5 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 96.7%-ով կատարում: Նշված գումարից 4.2 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 328.7 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 21%-ով կամ շուրջ 781.1 մլն դրամ:

Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն առաջին կիսամյակում կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92%-ով կատարում: Նշված գումարից 965.1 մլն դրամը՝ արտադպրոցական դաստիարակության, իսկ 319.2 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: Շեղումը պայմանավորված է հիմնականում երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման և համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսերի ցածր կատարողականով (համապատասխանաբար 17.8% և 10.4%), ինչպես նաև «Դատական դպրոց» ՊՈԱԿ-ում նախատեսված 15.8 մլն դրամ ներդրումները և «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ին 26.5 մլն դրամի պետական աջակցությունը

չտրամադրելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերն աճել են 34.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է արտադպրոցական դաստիարակության ծախսերի աճով:

2009 թվականի առաջին կիսամյակում կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 7.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 78.5%-ը, որը հիմնականում պայմանավորված է կրթական օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծախսերի ցածր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 31 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային ծրագրեր: ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության, ինչպես նաև Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրերի գծով արձանագրվել է համապատասխանաբար 71.9% և 123.7% կատարողական (օգտագործվել է համապատասխանաբար 495.1 մլն դրամ և 228.5 մլն դրամ): Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների շրջանակներում ցածր կատարողական է արձանագրվել մասնավորապես՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերում, որոնք նախատեսված 4.2 մլրդ դրամի դիմաց կազմել են 3.0 մլրդ դրամ, և շինարարության ծախսերում, որոնք նախատեսված 788.6 մլն դրամի փոխարեն կազմել են շուրջ 519.6 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը նվազել են 22.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի կրճատմամբ:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 213.8 մլն դրամ տրամադրվել է այլ դասերին չպատկանող կրթության բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 92.3% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 18.5%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 117.5 մլրդ դրամ՝ 95.8%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է հիմնականում «Ընտանիքի անդամներ և զավակներ», «Ծերություն», «Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» և «Բնակարանային ապահովում» խմբերի ցածր կատարողականով: 2008 թվականի համեմատ սոցիալական

պաշտպանության բնագավառի ծախսերն աճել են 14.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է թոշակների և նպաստների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 556 մլն դրամ է հատկացվել վատառողջության և անաշխատունակության խմբի ծախսերին՝ ապահովելով ծրագրի 84.2%-ով կատարում: Նշված հատկացումներից 78.1 մլն դրամ տրամադրվել է վատառողջությանը, ավելի քան 447.8 մլն դրամ՝ անաշխատունակությանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 87.4%-ով և 83.7%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծրագրի ցածր կատարողականով, որի շրջանակներում ծախսվել է 396.1 մլն դրամ կամ նախատեսվածի 83.3%-ը: Երկու ծրագրերի՝ «Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» և «Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցում» ծրագրերի գծով ծախսեր չեն իրականացվել: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ վատառողջության և անաշխատունակության ծախսերն ավելացել են 19.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման, ինչպես նաև պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերի աճով:

Ծերության բնագավառի ծրագրերին 2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 88 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 98.3%-ը: Նշված գումարից 73.1 մլրդ դրամը տրամադրվել է ապահովագրական թոշակների վճարմանը, որոնք կատարվել են 99.1%-ով: Համապատասխանաբար 9.7, 1.3 և 3 մլրդ դրամ է տրամադրվել սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների, շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների և սոցիալական կենսաթոշակների վճարմանը, որոնց կիսամյակային ծրագիրը կատարվել է համապատասխանաբար 95.8, 88.4 և 95.9 տոկոսով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծերության բնագավառի ծախսերն աճել են 14%-ով:

Հարազատին կորցրած անձանց հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել են 64.9 մլն դրամ նպաստներ կամ նախատեսվածի 72.6%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 8.3 անգամ՝ հիմնականում պայմանավորված Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ

Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին հատկացված նպաստների ավելացմամբ:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի գծով պետական բյուջեի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 19.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.1%-ը, որից 14.2 մլրդ դրամն ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության գումարն է, որը կազմել է ծրագրի 91.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ «Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերն աճել են 18.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է երեխայի ծննդյան միանվագ նպաստի, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի և հղիության ու ծննդաբերության նպաստի ավելացմամբ՝ համապատասխանաբար 3.8 անգամ, 6.8 անգամ և 9.3 անգամ:

Սոցիալական ոլորտի ծախսերից 1.7 մլրդ դրամ տրամադրվել է գործազրկությանը, որը կազմել է կիսամյակային ծրագրի 86.9%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է վարձատրվող հասարակական աշխատանքների, գործազուրկների աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց մասնագիտական ուսուցման և գործազրկության նպաստի ծրագրերի գծով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գործազրկության գծով կատարված ծախսերն աճել են 32.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է գործազրկության նպաստի ծախսերի աճով:

Բնակարանային ապահովման ծրագրերին 2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 74.5%-ը: Նշված գումարից 1.5 մլրդ դրամը տրամադրվել է զրհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավման ծրագրի ֆինանսավորմանը, որը կատարվել է 99.6%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության ծախսերի ցածր կատարողականով, որոնք կատարվել են համապատասխանաբար 14.6 և 49.3 տոկոսով: Բացի այդ, չի կատարվել ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանների, կահույքի, կենցաղային սարքերի և սարքավորումների տրամադրման ծրագիրը, որի շրջանակներում առաջին կիսամյակում նախատեսվել էր 62.7 մլն դրամի օգտագործում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ

բնակարանային ապահովման ծախսերը նվազել են 41.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծախսերի նվազմամբ:

Սոցիալական հատուկ արտոնություններին (այլ դասերին չպատկանող) հատկացվել է 2.6 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 98.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է վետերանների պատվովճարների համեմատաբար ցածր կատարողականով, որը կազմել է 93.5% (530.9 մլն դրամ): 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների ծախսերն աճել են 27.1%-ով՝ պայմանավորված վետերանների պատվովճարների, ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ.ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրման և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերի ավելացմամբ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 3.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 75.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստների ցածր կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 73.1%, 17.3% և 81%: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծախսերն աճել են 51.1%-ով:

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսված 9.9 մլրդ դրամից օգտագործվել է 8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 80.7%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործված միջոցներն ավելացել են 66.3%-ով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐՈՂ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿՈՒՄ

2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 77.2 մլրդ դրամ պակասուրդով՝ ճշտված ծրագրով նախատեսված 83.2 մլրդ դրամի փոխարեն: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետական բյուջեն կատարվել էր շուրջ 10.4 մլրդ դրամ հավելուրդով:

Ֆինանսավորման ներքին աղբյուրներն առաջին կիսամյակում կազմել են -121.8 մլրդ դրամ՝ նախատեսված -110.2 մլրդ դրամի դիմաց: Ներքին ֆինանսավորման ցուցանիշի շեղումը ծրագրից հիմնականում պայմանավորված է ժամանակավորապես ազատ միջոցների պակաս օգտագործմամբ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը կազմել են 8.6 մլրդ դրամ՝ նախատեսված 3.2 մլրդ դրամի դիմաց: Սա պայմանավորված է նախատեսվածից ավելի մեծ ծավալով տեղաբաշխումներով. առաջին կիսամյակում տեղաբաշխվել են 51,430.6 մլն դրամի պարտատոմսեր՝ նախատեսված 49,617.9 մլն դրամի դիմաց, որից հասույթը կազմել է 47,384.3 մլն դրամ՝ նախատեսված 43,264.2 մլն դրամի դիմաց: Առաջին եռամսյակում ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակից ելնելով՝ մուտքերը ծրագրվել էին այն հաշվարկով, որ երկրորդ եռամսյակում պարտատոմսերի տեղաբաշխումների միջին եկամտաբերությունը կհասնի 15%-ի: Մինչդեռ ապրիլ ամսից սկսած, ՀՀ կենտրոնական բանկի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն իրականացված միջոցառումների (ՀՀ կենտրոնական բանկն ակտիվորեն իրականացնում է պարտատոմսերի առքի գործառնություններ, չի կրճատում ռեպո գործառնությունների ծավալը) արդյունքում, երկրորդ եռամսյակում պարտատոմսերի տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը կազմեց 12.26%, որի արդյունքում նախատեսվածից ավելի մեծ ծավալով հասույթ ստացվեց: 2009 թվականի առաջին կիսամյակում շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 600,000.0 հազ. դրամ ծավալով: Այս պարտատոմսերից տեղաբաշխվել են 100,765.0 հազ. դրամի պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 101,181.9 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը, որը կազմել է 594.8 հազար դրամ՝ նախատեսված 1.5 մլն դրամի փոխարեն: Մուրհակների մարման նպատակով նախատեսված 61.5 մլն դրամի վճարումներն ամբողջությամբ կատարվել են:

Հաշվետու ժամանակահատվածում 607.4 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը:

Հունվար-հունիս ամիսների ընթացքում պետական բյուջեի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են շուրջ -129.8 մլրդ դրամ՝ 15.2%-ով գերազանցելով ծրագիրը: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ՀՀ ռեզիդենտներից պետական բյուջեից տրամադրվել են 12.1 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 80.5%-ը: Մասնավորապես՝ 8.1 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին աղբյուրներից ստացված նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 87.2%-ը: 3.0 մլրդ դրամի վարկ է տրամադրվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին: Շուրջ 69.1 մլն դրամի վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված միջպետական վարկի հաշվին 684 մլն դրամ բյուջետային վարկեր են հատկացվել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին: Եվս 54.6 մլն դրամ տրամադրվել է «Կանազ» ԲԲԸ-ի ֆինանսական պարտավորությունների մարման նպատակով:

Տրամադրված վարկերի վերադարձից առաջին կիսամյակում բյուջե է վերադարձվել շուրջ 4.7 մլրդ դրամ, որից 3.7 մլրդ դրամը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից:

2009 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից առաջին կիսամյակում նախատեսված 20.3 մլրդ դրամից օգտագործվել է 7.5 մլրդ դրամը:

Անցած ժամանակահատվածում 142.6 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները՝ կազմելով կիսամյակային ծրագրի 117.5%-ը: Ազատ բյուջետային միջոցների ավելացումը պայմանավորված է նրանով, որ Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված 185.1 մլրդ դրամ պետական վարկի միջոցները ներդրվել են գանձապետարանում բացված կայունացման դեպոզիտային հաշվին, որից օգտագործվել է ընդամենը 9.6 մլրդ դրամը:

2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել է 199 մլրդ դրամով՝ կազմելով նախատեսվածի 102.9%-ը:

Առաջին կիսամյակում արտաքին դոնորների կողմից տրամադրվել են 220 մլրդ դրամի վարկային միջոցներ, որից 185.1 մլրդ դրամը՝ ՌԴ կառավարության կողմից: Վարկերի կիսամյակային ծրագրից ավել է օգտագործվել 3.4% կամ 7.3 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեզագային ցիկլով

եներգաբլոկի կառուցման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ստացվել են նախատեսվածից 125.9%-ով կամ շուրջ 9 մլրդ դրամով ավել միջոցներ:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է ավելի քան 3.1 մլրդ դրամ, որից 2.1 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի, 110.6 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 349.5 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 17.2 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 427.5 մլն դրամ՝ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը և շուրջ 91.3 մլն դրամ՝ բարձր լարման ցանցերի համակարգերի վերանորոգման ծրագրի գծով Գերմանիայի Դաշնության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով ֆինանսավորումը կատարվել է 99.8%-ով և կազմել -16.3 մլրդ դրամ: 2009 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից արտաքին վարկավորումը կազմել է 16.2 մլրդ դրամ, որը որպես միջպետական վարկ տրամադրվել է ԼՂՀ-ին: 29.5 մլն դրամ վերադարձվել է Վրաստանի կողմից՝ ՀՀ նկատմամբ ունեցած պարտքի դիմաց: Նշված գումարը 2008 թվականի պարտավորություն է, որը Վրաստանի կողմից վճարվել է սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ 2008 թվականի դեկտեմբերին, սակայն միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվարին: 2009 թվականի երկրորդ եռամսյակում նախատեսված վճարումը նույնպես իրականացվել է սահմանված ժամկետում, սակայն միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է 2009թ. հուլիսի 1-ին, ուստի չի արտացոլվել առաջին կիսամյակի հաշվետվության մեջ: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 99.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 75.8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 1.6 մլրդ դրամով ավելացել է արտաքին վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը: